

**ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

**ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ  
ԱՊՐԻՆՔ**

**ՈՒՍՈՒՑՉԻ ՈՒՂԵՑՈՅՑ**

**Ց տարեկան մանուկներու**


**քրիստոնէական դաստիարակութեան ուսումնական ծրագրի համար**

**Առաջին տարի**

**Մաս 1-2**

**ԱՆԹԻԼԻԱՍ**

**2005**



ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Մ. Օ. Տ. Տ.

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

**Աշխատանքը հովանավորված է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ,  
Կիրակնօրեայ Դպրոցներու, հոգեւոր ուսումնական հիմնարկութիւններու  
եւ ամէնօրեայ վարժարաններու մէջ կրօնի դասաւանդման համար**

Հովանավորութեամբ

World Vision



միջազգային քրիստոնէական բարեսիրական միութեան

եւ



կազմակերպութեան



© Armenian Prelacy - Lebanon

E-mail: azkayin@inco.com.lb

## **ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

1-րդ դաս – Աստուած ստեղծեց աշխարհը _____	17
2-րդ դաս – Աստուած մարդը կը ստեղծէ _____	19
3-րդ դաս – Ադամն ու Եւան Աստուծոյ պատուիրանը կ'անտեսեն _____	21
4-րդ դաս – Աշխարհի ջրհեղեղը եւ Նոյին փրկութիւնը _____	23
5-րդ դաս – Աստուած ուխտ կը կնքէ Աբրահամի հետ _____	25
6-րդ դաս – Աստուած իր խոստումը կը կատարէ _____	27
7-րդ դաս – Իսահակին համար հարսնցու մը _____	29
8-րդ դաս – Չարութիւն _____	31
9-րդ դաս – Յակոբի երազը _____	33
10-րդ դաս – Երկու եղբայրները կը հաշտուին _____	35
11-րդ դաս – Տէրը կը փրկէ Յովսէփը _____	37
12-րդ դաս – Յովսէփի իր եղբայրները կը փրկէ _____	39
13-րդ դաս – Աստուած Մովսէսը կը կանչէ _____	41
14-րդ դաս – Աստուած իր ժողովուրդը դուրս կը բերէ Եգիպտոսէն _____	43
15-րդ դաս – Անապատին մէջ՝ Աստուծոյ առաջնորդութեամբ _____	45
16-րդ դաս – Աստուծոյ պատուիրանները եւ անոնց գործադրութիւնը _____	47
17-րդ դաս – Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ _____	49
18-րդ դաս – Տիրոջ մկրտութիւնը _____	51
19-րդ դաս – Յիսուս Քրիստոս իր աշակերտները կը կանչէ _____	53
20-րդ դաս – ՉԱստուած տեսնելու փափաք _____	56
21-րդ դաս – Խոնարհ աղօթք _____	59
22-րդ դաս – Տուն վերադարձող զաւակը _____	62
23-րդ դաս – Բարի սամարացին _____	65
24-րդ դաս – Աստուած աղօթել կը սորվեցնէ մեզի _____	68
25-րդ դաս – Ո՞վ է մեր մէջ մեծը _____	70
26-րդ դաս – Քրիստոսի սէրը _____	72
27-րդ դաս – Չար մշակները _____	74
28-րդ դաս – Իւղաբեր կիները _____	76
29-րդ դաս – Յիսուս Քրիստոս իբրեւ թագաւոր կու գայ _____	78
30-րդ դաս – Յիսուս Քրիստոս խաչին վրայ կը մեռնի _____	80
31-րդ դաս – Քրիստոս յարութիւն առաւ _____	82
32-րդ դաս – Աստուծոյ հաւատարիմ մարդիկը _____	85
33-րդ դաս – Յիսուս Քրիստոս նոր կեանք կը շնորհէ _____	87
34-րդ դաս – Յիսուս Քրիստոս ամէն մարդու կը մօտենայ _____	89
35-րդ դաս – Յիսուս Քրիստոս երկինք կը համբառնայ _____	91
36-րդ դաս – Յիսուս Քրիստոս Սուրբ Հոգին կը դրկէ _____	94

## Ներածութիւն

Այս գիրքը «Աստուծոյ Յետ Ապրիմք» մատենաշարի դասագիրքերէն է, որ 8 տարեկան դպրոցական փոքրերու համար պատրաստուած է: Այս դասագիրքը մանուկներուն սքանչելի ուղղութիւն կու տայ Յին եւ Նոր Կտակարաններուն ծանօթանալու: Իւրաքանչիւր դասին անպայմանօրէն կը տրուի Աստուածաշնչական պատմութիւն մը: Յստակ գաղափարներ կը տրուին նաեւ եկեղեցւոյ դաւանանքին ու խորհուրդներուն մասին: Իւրաքանչիւր դաս ունի նաեւ պարտականութիւններ, գործնական փորձեր եւ յաւելեալ պատմութիւններ՝ իբր ընթերցանութեան նիւթ: Այս շարքի ծրագրին մէջ կան՝

– Ուսուցչի ուղեցոյց<sup>(1)</sup>, ուր կը ներկայացուին Սուրբ Գիրքի ծանօթացման, Հայ Առաքելական Եկեղեցւոյ դաւանանքին եւ ծիսական արարողութեանց ծանօթացման յատուկ ուղղութիւններ, քննարկումներու համար կը նշուին հարցեր, իւրաքանչիւր դասի համար կը տրուին թելադրութիւններ եւ փորձ-պարտականութիւններ, ինչպէս նաեւ աղօթքներ, Սաղմոսներու գիրքէն հատուածներ ու եկեղեցական երաժշտութիւն: Ուղեցոյցին մէջ ցոյց կը տրուի թէ դասերուն մէջ գտնուող բոլոր նիւթերը ինչպէ՞ս պէտք է շաղկապել իրարու եւ մէկ ամբողջութեան վերածել: Հոն կը տրուի նաեւ յաւելեալ գրականութիւն, որոնք մեծապէս օգտակար պիտի ըլլան ուսուցչին:

– Աշակերտական դասագիրք, որուն մէջ գտնուող իւրաքանչիւր դաս հետեւեալ բովանդակութիւնը ունի.–

1. Մէկ էջի սահմանին մէջ պատմութիւն եւ Աստուածաշնչական նիւթի մը ամփոփումը, ուր կը ներկայացուին Սուրբ Գիրքէն քաղուած անծեր կամ դէպքեր: Զանոնք դիւրութեամբ կարելի է կարդալ ու հասկընալ նաեւ տան մէջ:
2. Փորձեր ու թելադրանքներ, որոնք կ'օժանդակեն մատուցուած նիւթը եւ Սուրբ Գրային դրուագները լաւապէս հասկնալու:
3. Կարելոր տօներու, սուրբերու եւ եկեղեցական արարողութիւններու մասին ամփոփ բացատրութիւններ, որոնց մէջ կարելոր տեղ տրուած է կրօնական մանրանկարչութեան, աղօթքներուն եւ շարականներուն:
4. Սուրբերուն կեանքը, որոնցմէ քանի մը հատին մասին ծանօթութիւն կը տրուի դասընթացքի ժամանակ: Կը խօսուի նաեւ եկեղեցւոյ խորհուրդներուն,

(1) Ծանօթ.– Մանուկներուն դասագիրքը հրատարակուած է երկու տարբեր գիրքերով, որոնցմէ իւրաքանչիւրը կը բովանդակէ 18 դասեր: Ուսուցչի ուղեցոյցը մէկ գիրքի մէջ ամփոփուած է, բովանդակելով ուղղութիւններ՝ 36 դասերուն համար:

մանրանկարչութեան եւ եկեղեցւոյ ճարտարապետութեան մասին:

5. «Ընտանեկան միջավայրին մէջ»: Այս բաժնին մէջ կը բացատրուի, թէ տան մէջ ինչպէ՞ս պէտք է նշել եկեղեցական տօները, թէ՛ ծնողները ինչպէ՞ս իրենց զաւակները պէտք է նախապատրաստեն Սուրբ Հաղորդութեան, ապաշխարութեան խորհուրդին եւ անոնց հետ միասին սորվին հարկ եղած աղօթքները, թէ ինչպէ՞ս պէտք է վարժեցնել փոքրերուն որ միշտ ուրիշներուն օգնեն, կամ հիւանդները խնամեն ու աղքատներուն հասնին:

## Դասագիրքին հիմնական նիւթը

Փոքր տարիքի դպրոցականներու (8 տարեկան) համար պատրաստուած այս դասագիրքին հիմնական նիւթը նշուած է անոր վերնագրին մէջ՝ «Աստուծոյ Յետ Ապրիմք»: Ուսումնական առաջին տարուան հետեւողներուն անիկա նախնական պատկերացում մը կու տայ Աստուածաշնչական դրուագներուն եւ հիմնական դէպքերուն մասին՝ աշխարհի ստեղծագործութենէն մինչեւ Հոգեգալուստ: Այս ամփոփ պատկերացումը մանուկները կը նախապատրաստէ ընկալելու տիեզերքի համայն պատմութիւնը, իբրեւ Աստուծոյ կողմէ հաստատուած իրականութիւն: Դասընթացքը կ'ընդգրկէ 36 դասեր եւ երկու հիմնական մասերու բաժնուած է, որոնցմէ իւրաքանչիւրը մէկ կիսամեակի համար է:

### 1-ին մաս. Հոկտեմբերէն-Փետրուար (18 դաս)

1-ին բաժին՝ Աստուծոյ աշխարհը եւ Աստուծոյ ժողովուրդը:

(15 դաս ուսումնական տարեշրջանի սկիզբէն մինչեւ Սուրբ Ծննդեան եւ Աստուծայայտնութեան շաբաթապահքի սկիզբը):

Աստուծոյ կողմէ աշխարհի եւ մարդու ստեղծումը, առաջին մարդոց անհնազանդութիւնը, Նոյի եւ Հին Կրտակարանեան նահապետներու՝ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի հաւատարմութիւնը Աստուծոյ նկատմամբ: Բարեպաշտ Յովսէփի պատմութիւնը եւ իսրայէլացիներու գերեվարումը դէպի Եգիպտոս, Մովսէսն ու Սհարոնը Իսրայէլի ժողովուրդը եգիպտական ստրկութենէն դէպի ազատութիւն կ'առաջնորդեն:

2-րդ բաժին՝ Աստուած մեզի հետ է:

(3 դաս, որ կը սկսի Սուրբ Ծննդեան եւ Աստուծայայտնութեան շաբաթապահքէն եւ կը տեւէ մինչեւ Աստուծայայտնութեան տօնը):

Սեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալուստը, Տիրոջ Սկրտութիւնը Յորդանանի մէջ, Յովհաննէս Սկրտիչը իբրեւ Աստուծոյ նախակարապետը:

2-րդ մաս. Փետրուարի վերջին մինչև Յունիս (18 դաս) 3-րդ բաժին. Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոս, մարդոց սիրոյն համար աշխարհ կու գայ փրկութիւն բերելու (9 դաս, Սեօ Պահքի նախապատրաստական շրջանէն մինչև Աւագ Շաբաթ):

Առաքեալներուն ընտրութիւնը, Ջաքէոս մաքսաւորին դարձը, վերոյիշեալ շաբաթներուն համար աւետարանական ընթերցումներ, Յիսուսի Երուսաղէմ մուտքը, Աւագ շաբթուան առաջին օրերուն կատարուող ժամերգութիւններուն նիւթերը:

4-րդ բաժին. Սեր Տէրը Յիսուս Քրիստոս մեզի նոր կեանք կը պարգեւէ:

(9 դաս, Աւագ Շաբթուան վերջին օրերէն ու Ջատիկէն մինչև Հոգեգալուստ):

Տիրոջ խաչի աստուածային ճանապարհը՝ Աւագ Հինգշաբթի եւ Աւագ Ուրբաթ, Տէրը կը լուայ իր աշակերտներուն ոտքերը, վերջին Ընթրիք, Յուդայի դաւաճանութիւնը, Եռօրեայ Ջատիկ, Աւագ Շաբթուան արարողութիւնները եւ հոգեւոր ծառայութիւն, Քրիստոսի Սրբազան Ջատիկը, Յարուցեալ Փրկչին 40 օրեայ քարոզութիւնը երկրի վրայ, Քրիստոսի համբարձումը եւ Հոգեգալուստ:

## Առաջին մասին բովանդակութիւնը

### Դասերուն անունները

- 1-րդ դաս – Աստուած աշխարհը ստեղծեց
- 2-րդ դաս – Աստուած մարդիկը ստեղծեց
- 3-րդ դաս – Ադամն ու Եւան կ'անտեսեն Աստուծոյ պատուիրանը
- 4-րդ դաս – Ջրհեղեղը եւ Նոյին փրկութիւնը
- 5-րդ դաս – Աստուած ուխտ կը կնքէ Աբրահամի հետ
- 6-րդ դաս – Աստուած իր խոստումը կը կատարէ
- 7-րդ դաս – Իսահակի համար հարսնցու մը
- 8-րդ դաս – Չարութեան գործ մը
- 9-րդ դաս – Յակոբի երազը
- 10-րդ դաս – Եղբայրները կը հաշտուին
- 11-րդ դաս – Տէրը կը փրկէ Յովսէփը
- 12-րդ դաս – Յովսէփ իր եղբայրները կը փրկէ
- 13-րդ դաս – Աստուած Մովսէսը կը կանչէ
- 14-րդ դաս – Աստուած իր ժողովուրդը դուրս կը բերէ Եգիպտոսէն
- 15-րդ դաս – Անապատին մէջ՝ Աստուծոյ առաջնորդութեամբ
- 16-րդ դաս – Աստուծոյ պատուիրանները եւ անոնց գործադրութիւնը
- 17-րդ դաս – Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
- 18-րդ դաս – Տիրոջ մկրտութիւնը

## Տօներ եւ Սրբապատկերներ

Տօն Սուրբ Աստուածածնի Գօտիի գիւտին:

Տօն Սուրբ մարգարէներ՝ Եզեկիէլի, Եզրի եւ Ջաքարիայի՝ Յովհաննէս Մկրտչի օր:

Սուրբ Յովհաննու Կարապետի եւ Յոթ Արդարի յիշատակի օր:

Նիկիոյ Սուրբ ժողովի 318 հայրապետներու յիշատակի օր:

**Սուրբ Մարիամի ծնունդը Աճնայէն** (կ'օգտագործուի տօնին մանրանկարը կամ սրբապատկերը):

Տօն Սուրբ Եկեղեցւոյ: Նաւակառիք Սուրբ Խաչի (կ'օգտագործուի տօնին կամ Յիսուսի խաչելութեան մանրանկարը կամ սրբապատկերը):

**Խաչվերաց** (կ'օգտագործուի տօնին կամ Յիսուսի խաչելութեան մանրանկարը կամ սրբապատկերը):

Սուրբ կոյսեր՝ Փեփրոնէի, Մարիանէի եւ Շուշանի՝ Քաջ Վարդան Մամիկոնեանի դստեր յիշատակի օր (կ'օգտագործուին սուրբերու պատկերները):

Սուրբ Հայրապետներ՝ Բարադամի, Անթնոսի եւ Երանոսի յիշատակի օր:

Տօն Սուրբ Գեորգ քաջամարտիկ զօրավարի, Աղոկտոսի եւ Ռոմանոս Երզնցոյի (կ'օգտագործուին սուրբերուն պատկերները)

**Վարագայ Սուրբ Խաչի տօն** (կ'օգտագործուի տօնին կամ Յիսուսի խաչելութեան մանրանկարը կամ սրբապատկերը):

Տօն Սուրբ Դաւիթ Դվնեցիի եւ Դամբէոս ու Դամբէուհի վկաներու:

Տօն Եւստաթէոսի եւ անոր կնոջ՝ Թեոփիստի ու երկու զաւակներուն՝ Երմոնէ եւ Նեկտարիին կոյսերուն:

Տօն Սահակ եւ Համազասպ իշխաններուն:

Տօն Քրիստոսի 72 աշակերտներուն:

Ս. Փոկաս հայրապետի եւ առաքեալներուն հետեւող Երանոսի յիշատակի օր:

Ս. կոյսեր՝ Թեկղի, Վառվառէի եւ Պեղագիայի յիշատակի օր:

Տօն Ս. Պանդալէոն բժիշկին, Երմողայիոս քահանային եւ Եպրաքսի կոյսին:

**Տօն սուրբ թարգմանչաց՝ Մեսրոպի, Եղիշի, Սովսէս Քերթոկի, Դաւիթ Անյառք փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացիի եւ Ներսէս Կլայեցիի** (կ'օգտագործուին տօնին եւ թարգմանիչներուն մանրանկարները եւ սրբապատկերները):

Տօն Աղուանից Ս. Գրիգորիս Կաթողիկոսի նշխարներու գիւտի, սուրբ հայրեր՝ Թաթուլի, Վարոսի, Թովմասի, Անտոնի, Կրօնիդէսի եւ Իննակնեան վանքին մէջ նահատակուած եօթ խոտաճարակներուն:

Տօն Անանիա, Մատթէոս, Բառնաբաս, Փիլիպպոս, Յով-

համնէս եւ Շիղա առաքեալներուն (կ'օգտագործուին տօնին եւ առաքեալներուն մանրանկարները եւ սրբապատկերները):

Տօն Դիոնիսիոս Արիսպագացիի, Տիմոթէոս եւ Տիտոս առաքեալներու (կ'օգտագործուին տօնին մանրանկարները եւ սրբապատկերները):

**Տօն Սուրբ Աւետարանիչներ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասի եւ Յովհաննէսի** (կ'օգտագործուին աւետարանիչներուն մանրանկարները եւ սրբապատկերները):

**Տօն Ս. Դունկիանոս հարիւրապետին եւ Յովսէփ Աստուածաձօր, Յովսէփ Արեմաթացիին եւ Քրիստոսի բարեկամ Դազարոսի ու անոր քոյրերուն՝ Մարիամի ու Մարթայի** (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարները եւ սրբապատկերները):

Տօն Թեոդոտոս քահանային, Ջենոն, Մակար եւ Եւդոքսիոս զինուորներու եւ Ռամելասի:

Տօն Սուրբ Խարիթեաններու, Արտեմիոս, Քրիստափոր, Կալիսիէ եւ Ակիլիմէ վկաներու:

Տօն տասներկու սուրբ վարդապետներու՝ Ռեթնոսի, Դիոնիսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիրել Երուսաղէմացիի, Եփրեմ Խուրի Ասորիի, Բարսեղ Կեսարացիի, Գրիգոր Նիւսացիի, Գրիգոր Աստուածաբանի, Եպիփան Կիպրացիի, Յովհան Ոսկեբերանի եւ Կիրել Աղեքսանդրացիի:

**Գիւտ Խաչ** (կ'օգտագործուին տօնի կամ Յիսուսի խաչելութեան մանրանկարները կամ սրբապատկերները):

Տօն Սուրբ Անաստաս քահանայի, Վարոսի, Թեոդորիտոսի ու անոր որդիներուն:

Տօն Հիպերիքեան սուրբերու, որոնք Սամոսատի մէջ նահատակուեցան, Սեվերինոս Սեբաստացիի, Բաբելաս ծերին եւ անոր 84 աշակերտներուն:

Տօն Սուրբ Յովհան Ոսկեբերան հայրապետի:

Տօն ամենայն սրբոց, հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից:

Տօն Ս. Ստեփանոս Հռոմի հայրապետին:

Տօն Ս. Ակիփանիոս եպիսկոպոսի, Յովսէփ քահանայի եւ Այթալա սարկաւազի ու Պղատոն վկայի:

Տօն Կոստանդնուպոլսոյ Միտրոփանէ, Աղեքսանդր եւ Պօղոս խոստովանող հայրապետներու, Մարկիանոս եւ Մարտիրոն նօտարներու:

**Սուրբ հրեշտակապետներ Միքայէլի եւ Գաբրիէլի եւ ամենայն երկնային զօրաց տօն** (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարներ կամ սրբապատկերներ):

Տօն Անտիոքի Սուրբ Մելիտոս եպիսկոպոսի, Մինասի, Բուրաս քահանայի եւ Շինու սարկաւազի:

Տօն Ս. Դեմիտրիոս վկայի եւ Բասիլիկոս քահանայի:

Տօն Ս. Գուրիասի, Սամունասի եւ Աբիբ սարկաւազի, Ռոմանոս եւ Մանուկ խոստովանողի, Հիւսիքոս զինուորի:

Տօն Ս. Անդրեաս եւ Ս. Փիլիպպոս առաքեալներու (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարներ կամ սրբապատկերներ):

**Սուրբ Աստուածածնի Տաճար ընծայման տօն** (կ'օգտագործուին տօնին մանրանկարները կամ սրբապատկերները):

Տօն Ս. Գրիգորիս Աքանջելագործի, Նիկողայիոս հայրապետի եւ Միւռոն եպիսկոպոսի:

Տօն Յուլիանէ եւ Վասիլուի կոյսերու, Աբրահամի եւ Խորէնի, Կոզմասի եւ Դամիանոսի եւ Աստուածատուր վկայի:

Տօն Ս. Դունկիանոս քահանայի, Տարագրոս, Պղոտոս եւ Անդրոնիկոս վկաներու, Ս. Պօղոս առաքեալի աշակերտ Ռոմեսիմոսի:

Տօն Ս. Կղեմէս հայրապետի եւ Տոռոմենի Բազարատ եպիսկոպոսի:

**Տօն մեր առաջին լուսաւորիչներ՝ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալներու** (կ'օգտագործուին տօնին մանրանկարները եւ սրբապատկերները):

Տօն Ս. Գեմարիոս եպիսկոպոսի, Մերկերիոս զինուորի, Յակովկի եւ Իրաւափառի:

Տօն Մինասի, Երմոգիմէսի եւ Եւզրաբոսի, Յովհաննէս եւ Ալեքսիոս կամաւոր աղքատներու:

Տօն Եգիպտացի Սուրբ Հայրեր՝ Պօղոսի, Պօղի, Մակարի, Եւզարի, Յովհան Գբեցիի, Յովհան կարճահասակի, Նեղոսի, Արսենի, Սիսիանի, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի եւ այլոց:

Տօն Ս. Նիկողայիոս Չմիւռնիացի Աքանջելագործ հայրապետի:

**Յղութիւն Ս. Աստուածածնի Աննայէն**

Ս. Կոռնելիոսի եւ Շմաւոնի՝ Քրիստոսի ազգականին, Չմիւռնիայի Պողիկարպոս հայրապետի եւ Արեւելեան վկաներու յիշատակի օր:

Ս. Եւստրատիոսի, Օզսէնտիոսի, Եւգիմէոսի, Ովոքստասի, Մարդարիոսի յիշատակի օր:

**Տօն Ս. Յակոբ Մճրնացի հայրապետի, Մարուգէ ճգնաւորի եւ Մելիտոս եպիսկոպոսի**

Տօն Ս. հայրապետներ Իգնատիոսի եւ Ադդի, Մարութա եպիսկոպոսի:

Տօն Թեոպոմպէոս եպիսկոպոսի եւ Թեովնա վկայի, Բաստոս, Եւսեբիոս, Եւտիքէս եւ Բասիլիդէս զինուորներու:

Տօն Ինդոսի եւ Դոմնայի, Գղերիկոս քահանայի եւ երկու բիւր նահատակներու, որոնք այրեցան Նիկոմիդացիներու եկեղեցւոյ մէջ:

Տօն Ս. Աբգարի՝ Քրիստոսի հաւատացող մեր անդրանիկ թագաւորին:

Տօն Ս. Դաւիթ մարգարէի եւ Տեառնեղբայր Յակոբոս առաքեալի:

**Տօն Ա. Ստեփանոս նախավկայի եւ առաջին մարտիրոսի:**

Տօն Ա. առաքելներ Պողոսի եւ Պետրոսի:  
Տօն Որոտման որդիներ Յակոբոս առաքելի եւ Յովհաննէս ւաւետարանիչի:

**Գրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան:**

**Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօն** (կ'օգտագործուին տօնին կամ Յիսուսի ծննդեան մանրանկարները եւ սրբապատկերները):

**Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անուանակոչութեան տօն** (կ'օգտագործուին տօնին կամ Սանուկ Յիսուսի մանրանկարները կամ սրբապատկերները):

**Ս. Յովհաննու Կարապետի ծննդեան տօն** (կ'օգտագործուին տօնին մանրանկարները կամ սրբապատկերները):

Տօն Պետրոս հայրապետի, Աբիսողոմ սարկաւազի, Սեբաստիայի Վլաս եպիսկոպոսի:

Տօն Ա. Անտոն ճգնաւորի:

Տօն Ա. Թեոդոսիոսի եւ Եփեսոսի մանուկներու:

Յովնան մարգարէի յիշատակի օր:

Տօն Ա. Սարգիս զօրավարի, անոր որդիին՝ Մարտիրոսի եւ 14 զինուորներուն (կ'օգտագործուին տօնին մանրանկարները կամ սրբապատկերները):

Տօն Ա. Ատովմեաններու:

Տօն Ա. Սուքիասեաններու:

Տօն Ա. Ոսկեան քահանաներու:

Տօն Ա. Սահակ Պարթեւ հայրապետի:

Տօն Ա. Մարկոս եպիսկոպոսի, Պիոն քահանայի, Կիրեղ եւ Բենիամին սարկաւազներու, Աբղլմսեի, Որմըզդան եւ Սայէն վկաներու:

Տօն Ա. Ղեւոնդեան քահանաներու:

Կոստանդնուպոլսոյ Ա. ժողովի 150 հայրապետներու յիշատակի օր (381 թ.):

Տեառնընդառաջ կամ տօն քառասնօրեայ Քրիստոսի Տաճար գալստեան (կ'օգտագործուին տօնին մանրանկարները կամ սրբապատկերները):

Ա. Թեոդորոս զօրավարի յիշատակի օր:

Ա. Կիրեղ Երուսաղէմի հայրապետի եւ միւս Կիրեղ եպիսկոպոսի ու անոր մօր՝ Աննայի յիշատակի օր:

Յովհան Երուսաղէմի հայրապետի, Յովհան Օծնեցիի, Յովհան Որոտնեցիի եւ Գրիգոր Տաթեւացիի յիշատակի օր:

Սեբաստիոյ մէջ նահատակուած 40 մանուկներու յիշատակի օր:

**Ա. Գրիգոր Լուսաւորչի սուկայի չարչարանքներու եւ Վիրապ մուտքի յիշատակի օր** (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարները կամ սրբապատկերները):

Ղազարոսի յարութեան յիշատակի օր:

**Ծաղկազարդ** (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարները կամ սրբապատկերները):

– *Անթիլիասի մէջ մանուկներուն Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը ստանալու օր* –:

10 կոյսերու յիշատակի օր:

**Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Վերջին Ընթրիքի եւ մատնութեան օր** (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարները կամ սրբապատկերները):

**Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի չարչարանքներու եւ խաչելութեան յիշատակի օր** (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարները կամ սրբապատկերները):

**Զատիկ Գրագալոյց**

**Զատիկ կամ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Յարութեան տօն** (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարները կամ սրբապատկերները):

Յովհաննէս Սկրտիչի գլխատման յիշատակի օր:

**Աւետումն Ա. Աստուածածնի** (կ'օգտագործուին համապատասխան մանրանկարները կամ սրբապատկերները):

Սուրբ Խաչի երեւման տօն:

**Տօն Համբարձման**

**Հոգեգալուստ**

Տօն Եղիա մարգարէի:

**Տօն Ա. Հռիփսիմեան Կոյսերու**

**Տօն Ա. Գայիանեան Կոյսերու**

**Տօն Ա. Յովհաննու Կարապետի եւ Աթանազիոս Եպիսկոպոսի**

Ա. Շողակաթ վանքի:

Ա. Գրիգոր Լուսաւորչի եւ ի Վիրապէն:

Տօն Կաթողիկէ Ա. Էջմիածնի:

Ա. Մանկանցն Բեթղեհէմի եւ Ակակիոսի վկային, Մովկիմայ քահանային եւ Կոտրատիոսի զինուորին:

Ա. Կոյսեր՝ Նունէի եւ Մանէի:

Ա. իշխաններ Սահակի, Յովսէփի եւ Սարգիս ու Բազոս վկաներու յիշատակի օր:

Ա. Ներսէս Մեծ հայրապետին եւ Խաղ եպիսկոպոսի յիշատակի օր:

Ա. Եպիփան Կիպրացիին, Բաբել հայրապետին եւ անոր երեք աշակերտներուն յիշատակի օր:

Ա. Կոստանդիանոս թագաւորին եւ անոր մօր Հեղինէի յիշատակի օր:

Ա. Թեոդոտոն Գաղատացիին եւ Թաթիլիա բժիշկին եւ Անկիւրիոյ մէջ նահատակուած եօթը կոյսերու յիշատակի օր:

Տօն Գրիգոր Լուսաւորչի նշխարներու զիւտին:

Ա. վկաներ Անտոնիոսի, Թեոփիլոսի, Անիքստոսի եւ Փոտիմոսի:

Ա. Դանիէլ մարգարէին եւ երեք մանուկներուն՝ Սեդրա-

քի, Միսաքի եւ Աբեղմագովի յիշատակի օր:  
Մեր Սուրբ Թարգմանիչներուն՝ Սահակի եւ Մեսրոպի  
յիշատակի օր:

Ս. Տրդատ մեր թագաւորին եւ տիկնոջ Աշխենին ու  
խոսրովիդուխտին:

Տօն Ա. Աստուածածնի տուփի գիւտին:

Ս. Կալիստատոսի եւ քառասուն եւ ինն վկաներուն եւ  
Ղուկիանոսի քահանայի յիշատակի օր:

Ս. Չաքարիա մարգարէի յիշատակի օր:

Ս. Եղիսէ մարգարէի յիշատակի օր:

Ս. 12 առաքեալներուն Քրիստոսի եւ Ա. Պօղոսի՝ 13-րդ  
առաքեալին:

Յիշատակ Յին Ուխտի Տապանակին եւ Նոր Ուխտի Ա.  
Եկեղեցիին:

**Վարդավառ: Պայծառակերպութիւն մեր Տիրոջ Յիսուս  
Քրիստոսի:**

Ս. Թադէոս առաքեալին եւ Սանդուխտ կոյսին:

Ս. Կիպրիանոս եպիսկոպոսին եւ 45 վկաներուն եւ  
Սուրբ կոյսեր՝ Յուստիանէի, Եւփիմէի եւ Քրիստիմէի:

Ս. Աթանազիոս եպիսկոպոսին եւ 10 աշակերտներու եւ  
5 վկաներու յիշատակի օր:

Սուրբ նախահայրեր՝ Ադամի, Աբելի, Սէթի, Ենոքի, Ե-  
նոքի, Նոյի, Մեքքիսդէի, Աբրահամի, Իսահակի, Յա-  
կոբի, Յովսէփի, Մովսէսի, Ահարոնի, Եղիազարի, Յե-  
սուի, Սամուէլի, Սամիսոնի, Յեփթայի, Բարակի, Գե-  
ղեոնի եւ այլ Սուրբ Նախահայրերու յիշատակի օր:

Եփեսոսի Ա. ժողովի երկու հարիւր հայրապետներու  
յիշատակի օր (431 թ.):

Տօն Շողակաթի, Ա. Էջմիածնի, Ա. Գրիգոր Լուսաւորչի  
տեսիլքին համաձայն:

**Վերափոխումն Ա. Աստուածածնի: Խաղողօրհնէք:**

Սուրբ Յովակիմի եւ Աննայի՝ Ա. Աստուածածնի ծնող-  
ներու եւ իւղաբեր կիներուն յիշատակի օր:

Սուրբ Երեմիա մարգարէի յիշատակի օր:

Սուրբ առաքեալներ՝ Թովմայի, Յակոբի եւ Շմաւոնի յի-  
շատակի օր:

Տօն Ա. Աստուածածնի գօտիի գիւտին:

## Ապաշխարութեան խորհուրդը

Ապաշխարութեան խորհուրդը,  
Ապաշխարիելու նախապատրաստութիւնը,  
Մեր մեղքերուն խոստովանութիւնը:

## Աւետարանիչներ

Չորս Աւետարանիչներ՝  
Աւետարանիչ Մատթէոս,

Աւետարանիչ Մարկոս,  
Աւետարանիչ Ղուկաս,  
Աւետարանիչ Յովհաննէս աստուածաբան:

## Խորհրդակատարութիւնները ուսումնասիրած ժամանակ

Տաճար,  
Ա. Սեղան,  
Խորան:

## Երգեցողութիւն եւ աղօթք

103-րդ սաղմոսը երեկոյեան ժամերգութեան ժամանակ:  
Սաղմոսագրքի օգտագործումը աղօթքներու ժամա-  
նակ:

«Երանելի մարդ»:

«Քու խաչիդ կ'երկրպագենք»:

«Սուրբ Գրիգոր Լուսաւորչին նուիրուած շարականը»:

«Երկնային Հօր»:

«Սուրբ Երրորդութիւն»:

Աղօթք դաւանանքէն առաջ՝ «Ներէ՛ մեր մեղքերը, Տէ՛ր,  
ներէ՛»:

Ա. Մարիամ Աստուածածնի «Մեծացուցէ անձն իմ  
զՏէր...» օրհներգութիւնը (Ղկ. 1.46-47):

Ա. պատարագի 102-րդ սաղմոսի Ա. Կանոնի օրհնու-  
թիւնը:

Քրիստոսի Ճննդեան շարականի Ա. Կանոնի օրհնու-  
թեան հատուածը:

Ա. Թարգմանչաց նուիրուած շարական:

Ա. Գրիգոր Նարեկացիին նուիրուած շարական:

Ա. Գրիգոր Տաթեւացիին նուիրուած շարական:

Ա. Ներսէս Շնորհալիին նուիրուած շարական:

Ա. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան նախատօնա-  
կի շարական (Ա. Նախահայրերու):

Ա. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան շարական՝  
«Խորհուրդ մեծ...»:

Անուանակոչութեան շարական:

Տեառնընդառաջի շարական:

Ա. Սարգիսի շարական:

Ա. Վարդանանց շարական:

Սուրբ Աստուածածնի աւետման շարական:

Ծաղկազարդի շարական:

Աւագ շաբթուան ժամերգութիւններ:

Ձատկական շարականներ:

Ա. խաչի երեւման շարական:

Համբարձման շարականներ:

Հոգեգալուստի շարականներ:

## **Դպրոցական կանուխ տարիներուն մանուկներուն մտածելակերպը եւ վարքային յատկութիւնը**

Այս տարիքի երեխաները ուսման հետեւելու եւ մատուցուածը ընկալելու համար բաւականաչափ ատակ կ'ըլլան: Անոնք արդէն պատրաստ կ'ըլլան զգայարանքներու միջոցաւ իրենց հասնող զգայութիւններու բազմազանութիւնը ըմբռնելու, բաւարար կերպով կը տիրապետեն լեզուին եւ կրնան պարզ գաղափարներ թուղթի վրայ շարադրել: Անոնք ամբողջութեամբ կարող կ'ըլլան այլեւս իրենց սեփական աշխարհը ստեղծելու:

### **Ստածելակերպը**

Դպրոցական այս տարիքին երեխաները կը սորվին իրականը երեւակայականէն զատորոշել: Անոնք արդէն կրնան ճանչնալ պատճառներու եւ հետեւանքներու առընչութիւնները, եւ տրամաբանելով, կրնան յստակ բացատրութիւններ տալ անոնց, մանաւանդ երբ անոնք յստակ օրինակներով կը լուսաբանուին: Աճմանկայս տարիքին, աշակերտները կը սիրեն զանազան առարկաներու «հաւաքածոներ» կազմել, զանոնք խումբերու բաժնել, կարգ եւ յաջորդականութիւն դնել անոնց մէջ: Աշակերտներուն այս դասակարգումի կարողութիւնը ուսուցիչներ պէտք է օգտագործեն Աստուածաշունչին ծանօթանալու աշխատանքին մէջ: Օրինակ, աշակերտներուն կարելի է օգնել, ուսումնական նիւթերը յիշելու համար, զանոնք բաղդատել Աստուածաշնչական դրուագներու մէջ իր հանդիպած անձերուն եւ դէպքերուն ժամանակագրական յաջորդականութեան շարքին հետեւելով (Մախահայրեր՝ Աբրահամ, Իսահակ, Յակոբ) եւ աշխարհագրական քարտէսի միջոցաւ յիշեալ անձերու տեղափոխութիւններուն հետեւելով:

### **Ըմբռնումներուն բացատրութիւն տալ**

Մանուկները հետաքրքրուած կ'ըլլան Սուրբ Գիրքի դէպքերուն ուժականութեամբ (dynamism), հոգեբանական խորութեամբ եւ հաւաստիութեամբ, ինչպէս նաեւ հաւատք կ'ունենան այն բանին, որ բոլոր այդ դէպքերուն մէջ Աստուծային տնօրինումը միշտ ներկայ է: Մանուկները Աստուածաշունչի հատուածներուն մեկնաբանութիւնը տառացիօրէն կ'ըմբռնեն, եւ միշտ հակում կ'ունենան զԱստուած մարդակերպ ընդունելու: Այս տարիքի երեխաներուն միտքը կը տպաւորուի այս կամ այն դէպքով: Ուստի երբ նոյն դէպքին թատերգութիւնը կատարուի եւ իրենք դերեր ստանձնեն եւ Սրբա-

զան Պատմութիւն մը վերարտադրեն, շատ աւելի «կը մօտենան» տուեալ դէպքի հոգեւոր եւ բարոյական իմաստին: Այդ դերերու կատարման ընթացքին անոնց համար շատ յստակ կը դառնայ թէ Նոյին կամ Աբրահամին համար ի՞նչ նշանակութիւն ունեցած է Աստուծոյ ապաւինիլը: Անոնք կը համոզուին նաեւ, թէ Մովսէսի եւ անոր կողմէ առաջնորդուած ժողովուրդին համար որքա՞ն դժուար եղած է անապատին մէջ անցուցած տասնամեակներուն ընթացքին Աստուծոյ հաւատարիմ մնալը:

Այս տարիքի երեխաներուն համար տակաւին դժուար է հեռանալ դէպքերը առարկայականօրէն տեսնելէն եւ մտքով խորանալու պատմութեան նիւթին: Դերեր ըստանձնելը ո՛չ միայն կը նպաստէ նիւթին յիշողութեան, այլ անոր իմաստին թափանցելու: Ուսուցիչը, Աստուածաշնչական դրուագները կարդալուն հետ, անոր հետեւող թատերգութենէն առաջ կամ վերջ պէտք է աշակերտներուն հարցումներ ուղղէ: Օրինակ՝ «Ինչո՞ւ այդ մարդը այդպէս վարուեցաւ եւ ո՛չ այնպէս, ի՞նչ կը զգար ան երբ այս կամ այն դէպքը տեղի կ'ունենար, տուեալ դէպքին ընթացքին ուրիշ ի՞նչ կրնար ընել ենթական, իսկ դուն մտան կացութեան մէջ եղա՞ծ ես երբեք, եւ ինչպէ՞ս վարուած ես այդ պահուն»:

### **Երեխաներուն վարքը ժողովուրդին մէջ**

7-10 տարեկան մանուկները հետզհետէ կը յաղթահարեն աւելի կանուխ տարիքի իրենց յատուկ եսակերտութիւնը եւ կը սկսին աւելի տրամաբանական ձեւով համագործակցիլ շրջապատի մարդոց հետ: Անոնք կը փորձեն շրջապատին հետ լեզու գտնել: Այս ձեւով կը կարգաւորուի նաեւ ուրիշներու հետ հաղորդակցութեան մէջ մտնելու անոնց փափաքը: Այս տարիքի մէջ, երեխաներ շուտով ընկերներ կը գտնեն, փոքր խումբեր կը կազմեն, ուր յստակ կերպով կը զօգրուին այլեւս իրենց «վարքի կանոնները», որոնց լաւապէս կը ծանօթանան: Այդ կանոններէն ոմանք՝ երբեմն իրենց կողմէ կը հաստատուին, այդ պատճառով ալ անոնք յաճախ փոփոխական կ'ըլլան: Հետզհետէ երբ իրենց ստեղծած խմբակները իրենց կեանքին մէջ կարեւոր կը դառնան, փոխ-յարաբերական կանոնները անգիր օրէնքի իմաստ կը ստանան:

Ինչ որ առաջ մասնաւոր կարեւորութիւն չէր ներկայացըններ, հիմա այլեւս կը դառնայ անվիճելի (նայեցէ՛ք 9-10 տարեկան մանուկներու խաղերուն, եւ կը տեսնէք, թէ ինչքա՞ն ժամանակ կը տրամադրեն օրէնքներ դնելու համար, կամ թէ ո՞վ «արդար» է, ո՞վ «անարդար», ո՞վ ճիշդ է կամ ո՞վ՝ սխալ): Իրենց աճման զուգահեռ, մանուկներու վարքը աւելի կը կանոնաւորուի եւ իրենց ճիշդ կամ սխալ վարուելակերպը կը ճշդորոշուի եր-

քեմն իրենց, եւ երբեմն բարեկամներու կողմէ, որոնք կը կառավարուին բաւական խիստ չափանիշներով:

### **Յոգեւոր ած**

Մօտաւորապէս 7 տարեկան հասակին, մանուկները կը սկսին լռութեամբ հետեւիլ եկեղեցական արարողութեանց: Ուստի հոգեւորականները, ուսուցիչները եւ ծնողները պէտք է ի մտի ունենան, որ մանուկներուն մօտ «բարի»-ի եւ «չար»-ի հասկացողութիւնները կը կազմաւորուին ամէն միջավայրի մէջ, թէ՛ ընտանեկան, թէ՛ բակի, թէ՛ եկեղեցւոյ շրջապատի եւ թէ ընկերային շրջանակէն ներս: Այս միջավայրերէն իւրաքանչիւրը իրեն յատուկ ըմբռնողութիւնը կրնայ ունենալ տուեալ հարցի մը գծով, եւ որ երեխայի մտքին մէջ լուրջ տարածայնութիւններ կրնայ ստեղծել:

Երեխաներուն մօտ բարոյական իսկական արժէքներ եւ իտեալներ ստեղծելու համար անհրաժեշտ է մեծերուն կեանքի օրինակը: Յոգեւոր ածը ճիշդ հունի մէջ կը դրուի երեխային մէջ, երբ զայն շրջապատող մարդիկը (հոգեւորական, ծնող, ուսուցիչներ, դասընկերներ թէ բարեկամներ) բարեպաշտութեան տիպարներ կը դառնան, եւ բարութեան, գթասրտութեան եւ սիրոյ աստուածաշնչական պատուիրանները կատարողներ կ'ըլլան:

### **Նախապատրաստութիւն դասի**

Ուսուցիչներուն մեծ մասը, ուսումնական տարեշրջանի սկզբնաւորութեան մեծ սպասումներով, յոյսով եւ որոշ չափով ալ անվստահութեամբ լեցուն կ'ըլլայ: Այդ անվստահութիւնը կու գայ ուսուցիչի աշխատելածեւէն եւ քիչ մըն ալ այն անորոշութենէն, թէ՛ ուսումնական այս նոր տարեշրջանին ինչպիսի՞ աշակերտներ պիտի ունենան, աշակերտները պիտի կարենա՞ն արդեօք յաղթահարել դասերու ծանրաբեռնութիւնը, կամ իրենք պիտի կարենա՞ն պատասխանել անոնցմէ եկած բոլոր հարցումներուն, կամ ի՞նչ պիտի ըլլայ եթէ դասին յարմար յաւելեալ նիւթեր չգտնեն աշակերտներուն տալու, եւայլն: Նման կացութիւն մը երկու պատասխան ունի.— Առաջին՝ կարելի եղածին չափ բժախնդրութեամբ նախապատրաստուիլ դասաւանդութեան: Երկրորդ՝ դասապահի ընթացքին ճկունութիւն ցուցաբերել, միշտ կեդրոնանալով դասընթացքի հիմքը կազմող նիւթերուն:

Նոյնիսկ բոլոր նիւթերուն տիրապետող փորձառու ուսուցիչներն անգամ երբեմն կը պարտաւորուին աննախատեսելի կացութիւններ յաղթահարել: Միշտ ի մտի պէտք է ունենաք, որ դուք դասարանին մէջ Աստուծոյ խօսքը պիտի սերմանէք: Այդ պահուն Սուրբ Յոգին ան-

պայման կ'օգնէ ձեզի: Բնաւ մի՛ ամչնաք հարցուն հարցընելու ձեր գործակիցներուն կամ օգնութիւն խնդրելու հոգեւորականներէն:

### **Դասաւանդութիւն**

#### **1. Պատրաստեցէ՛ք դասանիւթին համար անհրաժեշտ գիրքերը:**

Ձեր ձեռքին տակ մնայուն կերպով ըլլալիք անհրաժեշտ գիրքերը հետեւեալներն են.

- Ուսուցչի ուղեցոյցը,
- Աշակերտներու «Աստուծոյ հետ ապրինք» դասագիրքը,
- Այլ աղբիւրներ:

Լաւ կ'ըլլայ ձեռքի տակ ունենալ Աստուածաշունչ, ժամագիրք, տօնական շարականներու եւ աղօթքներու բնագիրներ պարունակող գիրքեր, ուսուցիչի յատուկ տետրակ (որուն մէջ պէտք է արձանագրել թէ դասի ընթացքին ի՞նչ բան լաւ էր եւ ի՞նչ բան ձախողեցանք իրագործել, կամ ի՞նչ բան պէտք է փոխել յաջորդ անգամ), դասի ընթացքին պարտականութիւններ կատարելու համար անհրաժեշտ գրեմական պիտոյքներ (մկրատ, սոսինձ, թուղթ, գրիչներ, եւայլն):

#### **2. Պատրաստեցէ՛ք իւրաքանչիւր դասանիւթը:**

- Սկսեցէ՛ք ուղեցոյցին մէջ ուսուցիչին համար նախատեսուած «Պատմութիւններ Սուրբ Գիրքէն» բաժնով: Ընտրեցէ՛ք հետաքրքրական հարցերը եւ պարտականութիւնները, դասապահի ընթացքին ձեր ընելիքներուն մասին նօթեր առէք, ինչպէս նաեւ ձեր անձնական գաղափարները գրեցէք: Արձանագրեցէ՛ք նաեւ անորոշ կէտերը, եթէ կան: Անպայման Աստուածաշունչէն կարդացէ՛ք դասին հետ առնչուող հատուածները, որոնք նշուած են ուղեցոյցին մէջ:
- Բացէ՛ք աշակերտական դասագիրքը եւ բժախնդրօրէն նայեցէ՛ք ներկայացուած հարցերուն եւ նիւթերուն: Սկիզբէն որոշեցէ՛ք թէ աշակերտները անոնց ո՞ր մասը դասարանին մէջ պիտի սորվին, եւ ո՞ր մասը տան մէջ պիտի կատարեն՝ ծնողներուն հետ: Պէտք է ամէն գնով զգուշանալ ամէն ինչ դասարանին մէջ կատարել: Այս դասընթացքին հիմնական նպատակներէն մէկն է, կարգ մը նիւթերու շուրջ ծնողք-զուակ խորհրդակցութեան կապ ստեղծելը: Այդ նիւթերն են՝ Սուրբ Գիրքը, կեանքի բարոյական խնդիրները, եկեղեցական կեանքը, եւայլն: Ամէն դասապահի վերջաւորութեան ամբողջ նիւթը աչքէ անցուցէ՛ք եւ աշակերտներուն ուղղութիւն տուէք, թէ՛ ծնողներուն օժանդակութեամբ ո՞ր պարտականութիւնները տան մէջ պիտի կատարեն:

– Ուսուցիչի ուղեցոյցին մէջ տրուած մեթոտներէն օգտուելով, թրեւս աւելի լաւ կ'ըլլայ, որ Աստուածաշնչական պատմութիւններով սկսիք դասը եւ ապա անցնիք աշակերտական դասագիրքին եւ պարտականութիւններուն: Եկեղեցական մեծ տօներու օրերուն, պէտք է դուք այդ տօնին իմաստն ու նշանակութիւնը փոխանցէք աշակերտներուն եւ ապա անցնիք Աստուածաշնչական պատմութիւններուն, որովհետեւ երբեմն անոնք կրնան ուղղակի կապ չունենալ տուեալ տօնին հետ: Ի հարկին, տուեալ դասի շրջագծին մէջ դուք կրնաք որոշ ազատութիւն ունենալ միւթի մատուցման եւ դասաւանդման մեթոտի ընտրութեան մէջ:

– **Ծանօթութիւն:** Ուսուցիչի ուղեցոյցին մեթոտները մէկ պահի սահմանին մէջ իւրացնելիք միւթէն շատ աւելին կը պարունակեն: Այդ իսկ պատճառաւ սկիզբէն պէտք է որոշել, թէ ի՞նչ բան դասարանին մէջ պիտի իւրացնեն եւ ի՞նչ բան՝ ընտանեկան միջավայրին մէջ ծնողներուն հետ միասին պիտի սորվին: Ասիկա կը վերաբերի նաեւ աշակերտներու դասագիրքին մէջ նշուած միւթերուն: Երբեք պէտք չէ վախճալ դասին մէկ մասը յաջորդ անգամուան ձգել, յատկապէս երբ աշակերտները որոշ միւթի մը վրայ ծանրացած են եւ որոշ պարտականութիւններ կատարելով զբաղած են: Անոնք շատ աւելի կ'օգտուին մտածելով տրուած միւթերուն մասին, քան թէ կրաւորական «ունկնդրութիւն» կատարելով:

### **Ինչպէս ըսած էինք, միշտ ճկունութիւն ցուցաբերեցէք:**

### **3. Մտածեցէք, թէ ինչպէ՞ս կարելի է դասը աւելի գրաւիչ ու արդիւնաւետ կերպով ներկայացնել:**

Դասամիւթը աւելի արդիւնաւետ դարձնելու համար ստորեւ ցուցնուցներ կը տրուին, դասամիւթի տարբեր բնագաւառներուն մէջ աշխատելու համար: Այդ ցուցնուցները վերաբաղ ըրէք ամէն անգամ երբ դասապահին պիտի նախապատրաստուիք:

### **Պատմութիւններ Սուրբ Գիրքէն**

Աշակերտներուն համար Սուրբ Գիրքէն քաղուած պատմութիւններուն նկատմամբ անոնց հետաքրքրութիւնը աւելի սրելու համար, կարելիութեան սահմաններուն մէջ զանազան պատկերներ ու առարկաներ օգտագործեցէք, ինչպէս՝ նկարներ, պուպիկներ, աւագ, ջուր, կաւ ամանով ապուր, եւայլն: Այդ նոյն առարկաները թատերական ներկայացումներուն համար ալ կրնաք գործածել (կամ այնպիսի փորձ-վարժութիւններու ժամանակ, երբ պիտի լուծէք՝ «Այս խօսքերը որո՞ւն կը պատկանին» խաղի տեսակներու ընթացքին): Կա-

րելի է նաեւ ուրիշ ձեւով ալ սկսիլ. կարելի է մանրամասնօրէն նկարագրել Սուրբ Գիրքի պատմութեան հերոսը, թէ՛ ի՞նչ տեսք ուներ արտաքինապէս, ի՞նչ բնաւորութեան տէր մէկն էր, ինչպէ՞ս կը խօսեր մարդոց հետ, եւայլն: Իրերայացորդ պատմութիւնները լաւապէս բացատրելու համար, ամէն շաբաթ պատի թերթ մը պատրաստեցէք եւ դասարանին մէջ զետեղեցէք, սկիզբէն ծրագրելով, որ դասի աւարտին, ամբողջ պատմութիւնը ներկայացնող պատկերը յստակամայ աշակերտներուն, աչքին: Անոր վրայէն կարելի է ամէն շաբաթ աշակերտներուն հետ կրկնել Սուրբ Գիրքի պատմութեան մանրամասնութիւններուն իրարու հետ ունեցած կապերը: Այդ պատի թերթին վրայ կարելի է միւթը կազմող բաղադրիչ տարրերը ի մի խմբել, օրինակ՝ «Նահապետներ»-ը, «հրեայ ժողովուրդի թափառումներ»-ը, «մարգարէներ»-ը եւայլն: Այս կամ այն միւթը վերջացրնել յետոյ, պատէն իջեցուցէք զայն եւ իրարու ամրացնելով գիրքի պէս գոցեցէք եւ մէկ կողմ դրէք, ապագային իբրեւ յաւելեալ միւթ օգտագործելու համար:

### **Սաղմոսագիրք**

Այս դասընթացքին մէջ Սաղմոսագիրքէն քաղուած բազմաթիւ հատուածներ կան, որոնք եկեղեցական ժամերգութիւններու ընթացքին կը կարդացուին: Անոնցմէ ոմանք, պատարագի ընթացքին կ'օգտագործուին իբրեւ օրհնութիւն, միւսները իբրեւ ալիւլիաներ՝ որոնք Գործք Առաքելոցի ընթերցումէն առաջ կը կատարուին: Սաղմոսներու կարգ մը առանձին հատուածներ **կրկնեցի** դեր կը կատարեն, այսինքն՝ ժամերգութեան ընթացքին քանի մը անգամ կը կարդացուին: Կարճ նախադասութիւններ ունենալով եւ յատուկ յանգաւորում, սաղմոսները դիւրաւ կարելի է գոց սորվիլ: Եթէ աշակերտները զանոնք կարենան գոց սորվիլ, անոնք շատ դիւրաւ մասնակից պիտի դառնան ժամերգութեան: Սաղմոսագիրքէն քաղուած հատուածները դասի ընթացքին տարբեր կերպով պէտք է օգտագործել: Եթէ անոնք ժամերգութեան ընթացքին կարդացուող հատուածներ են, անոնք պէտք է երգել որոշ ձայնեղանակով եւ պէտք է զանոնք ժամերգութեան կարդացուած միջոցին ճանչնան:

Մեր կողմէ Սաղմոսագիրքէն զանազան հատուածներ մէջբերուած են՝ դասի միւթը լաւապէս իւրացնելու համար, ինչպէս օրինակ՝ Աստուծոյ ապաւինելու մասին գրուած սաղմոսը: Լաւ կ'ըլլայ, որ իւրաքանչիւր դաս Սաղմոսագիրքէն ընտրուած հատուածով մը սկսի ու վերջանայ: Ուսուցիչը պէտք է հոգ տանի, որ աշակերտներ գոց սորվին այդ հատուածները, սակայն աւելի կարեւոր է, որ աշակերտները կարենան հասկնալ սաղմոսը եւ զայն կարենան կապել դասի գլխաւոր միւթին:

## **Տօներ եւ եկեղեցական տարի**

ժամագիրքին մէջն գտէք եկեղեցական տօներուն նը-  
ւիրուած շարականները: Աշակերտներուն հետ փորձե-  
ցէք սորվիլ շարականները: Չեր տետրակին մէջ նօթեր  
առէք տօներու շարականներուն մասին: Փնտռեցէք եւ  
գտէք անոնց մէջն այն հատուածը, որ լաւագոյն կեր-  
պով կ'արտայայտէ տօնին իմաստը: Դասի ընթացքին  
ծեր նախընտրած հատուածը կարդացէք աշակերտնե-  
րուն: Եկեղեցական Տաղաւար՝ մեծ (Տէրունի) տօնե-  
րուն նախապատրաստուելու համար, աշակերտնե-  
րուն թելադրեցէք Սաղմոսագիրքէն գտնել եւ կարդալ  
այն սաղմոսները (աշակերտներուն ցոյց տուէք յար-  
մար սաղմոսներուն տեղերը), որոնք պատարագի ըն-  
թացքին իբրեւ օրհնութիւն կ'երգուին: Եկեղեցական  
տօներու նախօրեակին տեղի կ'ունենայ ժամերգու-  
թիւն, որ նաեւ հսկում կը կոչուի: Անիկա կը բաժնուի  
երկու մասերու՝ առաւօտեան եւ երեկոյեան ժամերգու-  
թիւններու: Եթէ ունիք տօնական ժամերգութիւններու  
յաջորդականութիւնը ներկայացնող ծիսական գիրք,  
կարդացէք երեկոյեան ժամերգութեան ընթացքին կա-  
տարուող հատուածները եւ կամ այն հատուածները որ-  
ոնք առաւօտեան ժամերգութեան ընթացքին կը կա-  
տարուին: Անոնցմէ ոմանք տրուած են աշակերտական  
դասագիրքին մէջ: Երբեք պարտադիր չէ շարականնե-  
րը կամ անոնց կցորդները ամբողջութեամբ երգելը:  
Կարելի է անոնց մէջն ընտրել ճիշդ այն մասը, որ տօ-  
նին իմաստը լաւագոյնս կ'արտայայտէ: Աշակերտնե-  
րուն թելադրեցէք այդ հատուածներուն ուշադրութիւն  
ընել յատկապէս երեկոյեան ժամերգութեան ընթաց-  
քին: (Յիշեցուցէք անոնց, թէ ժամերգութեան ընթաց-  
քին ճիշդ ե՞րբ կարելի է զանոնք լսել, բացատրելով որ  
անոնցմէ առաջ եւ վերջ ի՞նչ կը կատարուի):

**Ծանօթութիւն:** *Ուսուցիչի ուղեցոյցին մէջ յիշուած  
կարգ մը տօները չեն գրուած աշակերտական դասա-  
գիրքին մէջ եւ չեն բացատրուած աշակերտներուն հա-  
մար: Սակայն հեղինակը յարմար տեսած է զանոնք յի-  
շեցնել ուսուցիչներուն:*

## **Սրբապատկերներ**

Ամենօրեայ իր արարողութիւններուն համար Հայ Առա-  
քելական Եկեղեցին զանազան սպասներ կը գործածէ,  
որոնց շարքին են նաեւ պատկերներ (մանրանկար,  
սրբապատկեր): Հայ Եկեղեցին կը սորվեցնէ միայն Աս-  
տուծոյ երկրպագել, կը մերժէ պատկերապաշտու-  
թիւնը եւ կ'ընդունի պատկերայարգութիւնը: Այդ իսկ  
պատճառով, մեր եկեղեցւոյ մէջ պատկերները կ'ընտ-  
րուին ու կ'ընդունուին յատուկ սկզբունքով (կը մեր-  
ժուին կուռք յիշեցնող հեթանոսական արձանները) եւ  
եկեղեցւոյ մէջ գործածուելու համար յատուկ կանոնով

կ'օրհնուին ու կ'օծուին: «Մաշտոց» ծիսագիրքին մէջ  
գրուած է. «Սուրբ Տէր, սրբեա՛ զկենդանագիր պատ-  
կերս զայս քրթոց վկայից՝ ի պատիւ եւ յերկրպագու-  
թիւն անենասուրբ Երրորդութեանը»: Իսկ պատկերը  
օրհնած ժամանակ, աղօթքին մէջ կը խնդրուի Աստուծ-  
մէ, որ այդ պատկերը դարձնէ «պատճառ երկրպագու-  
թեան համագոյ Սուրբ Երրորդութեան»: Ուրիշ խօսքով,  
օծման միջոցաւ հաւատացեալներուն հայեացքը  
կ'ուղղուի ոչ թէ դէպի «անշունչ պատկեր»-ը, այլ՝ «հա-  
մագոյ Սուրբ Երրորդութեան դաւանանք»-ին: Աշա-  
կերտները պէտք է նաեւ սորվին որ պատկերները (Յի-  
սուսի, Մարիամի, Մանուկին ու Աստուածամօր, Աստ-  
ուածաշունչի զանազան դրուագներու, սուրբերու,  
եւայլն) սոսկ նիւթեղէն են, որոնք կ'օգնեն մեզի տես-  
նելու եւ «օրինակ առնելու նախատիպէն» կամ «հա-  
ղորդուելու առաջին օրինակին»:

Աշակերտները պէտք է նաեւ ծանօթանան պատկերնե-  
րը եկեղեցւոյ մէջ տեղադրելու կարգ կանոնին: Հայ Ե-  
կեղեցւոյ մէջ պատկերները կը գտնուին հետեւեալ  
կերպով. Մանկան հետ Աստուածամօր պատկերը՝ Ա-  
ւագ Սեղանին վրայ կը դրուի, իսկ տասներկու առաք-  
եալներուն պատկերները խորանին ներսի խորշին մէջ:  
Միւս խորաններուն եւ մոմակառութեան սեղաններուն  
մէջ կարելի է գտնուել Ս. Յովհաննէս Մկրտիչի, Ս. Ստե-  
փանոս նախավկայի եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի պատ-  
կերները: Մկրտարանին մէջ՝ Մկրտութեան պատկեր-  
ները, եկեղեցւոյ գաւիթին ու մուտքին երկու կողմերը՝  
սրբապատկերներ: Դասի ընթացքին պէտք է աշա-  
կերտներուն բացատրել սրբապատկերներու գծա-  
գրութեան արուեստին մասին:

Նիւթը իւրացնելու իմաստով, յարմար պիտի ըլլար Ե-  
կեղեցական տօներուն նուիրուած մանրանկարները  
կամ սրբապատկերները շուտով օգտագործել այդ տօ-  
ներուն կամ համապատասխան Աստուածաշնչական  
պատմութիւնները մեկնաբանելու առիթով: Աշակերտ-  
ներուն պէտք է բացատրել, թէ պատկերներուն մէջ ինչ-  
պէ՞ս կը գծուին ու ի՞նչ կը խորհրդանշեն սրբութեան  
լուսապսակները: Տիրոջ փառքը, աստուածային լոյսը,  
եւայլն: Սուրբերու կեանքը ներկայացնելու ժամանակ,  
օգտագործեցէք սուրբերու նահատակութեան նկարնե-  
րը: Կարելի է իրարու հետ համեմատել Աստուածաշնչ-  
ական դրուագի մը եւ սրբանկարի մը նիւթը: Աշա-  
կերտներուն օգնեցէք մանրանկարներուն մէջ առանձ-  
նացնել հիմնական նիւթը եւ զանց ընել անկարեւոր  
պատկերները, բուն նիւթին վրայ կեդրոնացնելու հա-  
մար գիրենք:

## **Եկեղեցական երաժշտութիւն**

Չեր եկեղեցւոյ հովիւին կամ եկեղեցւոյ երգչախումբի

ղեկավարին օգնութեամբ աշակերտներուն սորվեցուցեք ութաձայն եղանակները որոնցմով կը կատարուին բոլոր շարականներու երգեցողութիւնները, օրհնութիւնները, փառաբանութիւնները, աղօթքները, եւայլն: Սորվեցուած եկեղեցական երաժշտութիւնը պէտք է ըլլայ տուեալ ծովսին մէջ երգուող տարբերակը: Ձայնագրեցէք ձեր եկեղեցւոյ մէջ կատարուած տօնական ժամերգութիւնը (կարելի է ձայնագրել նաեւ եկեղեցւոյ երգչախումբին կատարած փորձերէն մէկը) եւ տուեալ տօնէն առաջ ներկայացնել աշակերտներուն: Անոնք թող այդ ձայնագրութեան համապատասխան բնագիրներուն վրայէն հետեւին երգեցողութեան (եթէ այդ բնագիրները աշակերտներուն դասագիրքին մէջ չկան):

### **Սուրբերու յիշատակի օր**

Հարցուցէք եւ գտնէք, թէ իւրաքանչիւր աշակերտի նախընտրած սուրբը ո՞վ է եւ օրացոյցին մէջ նշեցէք անոնց յիշատակի օրերը: Տուեալ օրը երբ մօտենայ, մէկ օր առաջ դասարանին մէջ պատմեցէք, թէ այդ սուրբին կամ սրբուհիին կեանքը ի՞նչ դաս ունի տալիք մեզի: Քրիստոնէական Ընդհանուր եկեղեցւոյ կամ Հայ եկեղեցւոյ սուրբին յիշատակի օրը, անոր նկարը դասարան բերէք: Կարելի եղածին չափ, անոր կեանքը կապեցէք օրուան դասանիւթին մէջ արտայայտուած գաղափարներուն: Յիշատակուող սուրբին պատկերը զարդարելու համար, աշակերտներէն խնդրեցէք որ ծաղիկներ բերեն եւ ապա երգեն սուրբին նուիրուած շարականը: Աշակերտներուն հարցուցէք. – Ի՞նչ պէտք է ընել (օրինակ՝ աւելի՛ ջերմեռանդութեամբ աղօթել, աւելի՛ բարիք գործել, պարզ ու խոնարհ ըլլալ, չհպարտանալ, չդատապարտել, ներել, բարի ու համբերող ըլլալ, եւայլն) նմանելու համար այդ սուրբ մարդուն: Անոնցմէ իւրաքանչիւրը թող գրի առնէ իր նախասիրած սուրբին կեանքը: Կարելի է նաեւ բանաստեղծութիւն մը գրել ու ձօնել անոր յիշատակին: Այլ աշխատանք մը. կարելի է ամբողջ դասարանին հետ միասին հատուած առ հատուած բոլոր աշակերտներուն նախընտրած սուրբերուն վարքը գծագրել:

### **Աղօթք**

**Իւրաքանչիւր դաս պէտք է սկսի եւ աւարտի աղօթքով:** Կիրակնօրեայ դպրոցներուն մէջ դասերէն առաջ, բոլոր աշակերտները հաւաքական աղօթք կը կատարեն, իսկ դասերը աւարտելէն ետք, անոնք դարձեալ կ'աղօթեն: Եթէ դասերը զուգարդիպին եկեղեցական որեւէ տօնի, աշակերտները դասի սկիզբին եւ աւարտին, տօնին նըւիրուած շարականը պէտք է երգեն: Դասերը կարելի է նաեւ նիւթին կապուած սաղմոսերգութեամբ ալ սկսիլ ու աւարտել: Աշակերտներուն հետ միասին պէտք է

վերյիշել նաեւ դասին մէջ տրուած եկեղեցական երաժշտութիւնը կամ շարականը ու երգել զայն:

**4. Իւրաքանչիւր դասապահէ առաջ չմոռնաք հետեւեալ երեք հարցումները ուղղել դուք ձեզի:** (Սակայն նախ պատասխանեցէք 5-րդ կէտի հարցումին):

- Եթէ դասի համար յատկացուած ժամանակը բաւարար ըլլար աշակերտներուն բան մը սորվեցնելու (հասկնալու, բարի գործերու, հմուտ դառնալու մասին, եւայլն), տուեալ դասին համար ի՞նչ նիւթ կ'ընտրէի:
- Ինչպէ՞ս կարելի է նիւթը աւելի լաւ ներկայացնել:
- Դասի աւարտին ինչպէ՞ս կրնամ գիտնալ թէ ինչքա՞ն յաջողած եմ բան մը սորվեցնել եւ ինչքա՞ն՞ վ ձախուղած եմ:

**5. Լաւ կը ճանչնամ աշակերտներս: Ի՞նչ բան զիրենք աւելի՛ կը հետաքրքրէ:**

**6. Ինչպէ՞ս օգնել աշակերտներուն, որպէսզի անոնք ըմբռնեն տուեալ դասով ներկայացուած նիւթն եւ իրենց աջօրեայ կեանքին միջեւ գտնուող կապը:**

### **Պաշտամունքային (ծիսական) գիրքեր, որոնք կրնան օգտակար ըլլալ ուսուցչին**

- Ժամագիրք
- Շարակնոց
- Ճաշոց Գիրք
- Տօնացոյց
- Մաշտոց
- Պատարագամատոյց
- Տաղարան
- Սաղմոսագիրք:

### **Ցաւելեալ գրականութիւն (ուսուցչին համար)**

- «Աստուածաշունչ», Պէյրութ 1981:
- «Կնիք Հաւատոյ», Անթիլիաս 1998:
- «Գիրք թղթոց», Երուսաղէմ 1994:
- «Գանձասար» Աստուածաբանական հանդէս, Երեւան 1992-1996:
- «Քրիստոնէական», Բարգէն Ա. Կաթողիկոս, Անթիլիաս 1980:
- «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ», Աբէլ Արք. Մխիթարեան, Տփղիս 1873:
- «Ազգապատում», Մաղաքիա Արք. Օրմանեան, Անթիլիաս, 2001:
- «Ճանչնանք Մեր եկեղեցին», Նուպար Սրկ. Պերպլեան, Անթիլիաս, 1988:
- «Վարք Սրբոց», Անթիլիաս, 1994:
- «Բառարան Ս. Գրոց», Կ. Պոլիս, 1881:

**Ղասի հիմնական նիւթը՝** Աստուած ստեղծեց աշխարհը եւ Աստուած տեսաւ, որ անիկա բարի է:  
**Ս. Գիրք՝** Ծն. 1:1-25

**Սաղմոսագիրք՝** Սղ. 103: 1-24 (տե՛ս նաեւ Ծն. 1:1)

**Կեանքը եկեղեցոյ մէջ՝** Աստուծոյ ստեղծած աշխարհին եւ բնութեան նկատմամբ՝ հաւատացեալ մարդոց հոգածութիւնը:

**Եկեղեցական տօներ եւ սուրբերու յիշատակութեան օրեր՝** Բարեկենդան Ս. Խաչի:

### **Նախապատրաստութիւն ղասի**

Ղասարանային աշխատանքի համար պատրաստեցէք նիւթին կապուած անհրաժեշտ առարկաներ: Երբ աշակերտները ղասարան մըտնեն, կրնաք լուսանկարել զիրենք: Մեծ թուղթի մը վրայ գրեցէք «Աստուած ստեղծեց աշխարհը», ուրիշ թուղթի մը վրայ՝ 103-րդ սաղմոսէն քանի մը տողեր:

### **Ղասանիւթին**

#### **տեսանելի ներկայացումը**

Ղասարանին մէկ անկիւնը սեղան մը դրէք, ուր ամէն ղասի ատեն աշակերտներուն կրնաք ցոյց տալ այն առարկաները, որոնք կրնան նպաստել անոնց՝ աչքով ընկալելու օրուան ղասին նիւթը: Այսպիսի աշխատանքի համար կրնաք հետեւեալը պատրաստել. — Ծաղիկներ դրէք շուրով լեցուն ծաղկամանի մը մէջ, անոր շուրջը քարեր, գեղեցիկ տերեւներ, բնութեան մասին ամսաթերթեր եւ կենդանիներու նկարներ: Եթէ վանդակներ ունիք եւ եթէ վըստահ էք որ աշակերտները չեն վախճար, կրնաք փոքրիկ կենդանիներ ալ բերել ղասարան: Աշակերտներուն թելադրեցէք մօտենալ եւ մօտէն դիտել սեղանին վրայ դրուած առարկաները: Լաւ պիտի ըլլայ, եթէ այդ պահուն դնէք Սաղմոս 103-ի նախապէս կատարուած ծայ-

նային արծանագրութիւնը, որով կը սկսի երեկոյեան ժամերգութիւնը:

### **Ղասի սկզբնաւորութեան**

Եթէ կարելի ըլլայ նկարեցէք իւրաքանչիւր աշակերտ առանձին, երբ առաջին անգամ ղասարան կը մըտնէ: Յաջորդ պահուն կարելի է այդ նկարներով զարդարել ղասարանին պատերը (տե՛ս երկրորդ ղասի «Նախապատրաստութիւն ղասի» բաժինը): Երբ բոլոր աշակերտները հաւաքուին՝ շրջանակ մը թող կազմեն, կամ ալ իրենց գրասեղաններուն մօտ ոտքի կենան: Անոնց ըսէք որ իրենց անունները տան հերթաբար եւ ապա ըսեն, թէ բնութեան գրկին մէջ երբ պտոյտի երթան, ամէնէն շատ ի՞նչ կը սիրեն ընել: Թող ըսեն թէ իրենց ղասարանին մէջ որո՞ւն ծանօթ են արդէն եւ թելադրեցէք որ ղասէն վերջ իրարու մօտ երթան ու ծանօթանան:

### **Ղատմութիւններ Սուրբ Գիրքէն**

Ղասին նիւթն է՝ Աստուծոյ կողմէ աշխարհի ստեղծումը: Ստեղծագործութեան մասին պատմած ժամանակ, օգտուեցէք աշակերտներուն համար պատրաստուած ղասագիրքէն, ինչպէս նաեւ ձեզի համար մեր նշած գիրքերէն: Աշակերտներուն թելադրեցէք կատարել ղասագիրքին 5-րդ էջի պարտականութիւնը:

### **Ղասի հիմնական նիւթին բացատրութիւն**

Աշակերտներուն հետ միասին, Սաղմոսագիրքէն գտէք 103-րդ սաղմոսը եւ կամաց-կամաց կարդացէք զայն, կանգ առնելով յատկապէս հետաքրքրական տողերուն վրայ: Աշակերտները թող իրենք ըսեն թէ ինչքա՞ն գեղեցիկ է բնութիւնը եւ թէ ղաշտին կամ անտառին մէջ ցերեկ կամ գիշեր ատեն ի՞նչ բան շատ տպաւորած է զիրենք: Փորձեցէք վերլուծել ղասին հիմնական նիւթը, օգտուելով ղասագիրքի 5-րդ էջին մէջ «Խօսիմք կարդացուած պատմութիւններուն մասին» բաժնի հարցումներէն:

Փորձեցէք աշակերտներուն հետ միասին գծել «Աստուած աշխարհը ստեղծեց» նիւթով գծանկարներ եւ ապա անոնց հետ միասին մտածեցէք, թէ ինչպէ՞ս երախտապարտ պէտք է ըլլանք Աստուծոյ՝ այսպիսի հիանալի աշխարհ մը մեզի տուած ըլլալուն համար:

### **Կեանքը եկեղեցոյ մէջ**

Աշակերտներուն ուշադրութիւնը հրաւիրեցէք ղասին մէջ նշուած այն գաղափարին վրայ, ուր կ'ըսուի թէ հաւատացեալներ բնութեան նրկատմամբ հոգածու վերաբերմունք պէտք է ցոյց տան: Բացատրեցէք անոնց, թէ աշխարհի վրայ գտնուող

բոլոր վանքերուն եւ ծխական եկեղեցիներու շրջափակերուն մէջ, մարդիկ ինչպէ՛ս հոգ կը տանին բնութեան եւ Աստուծոյ կողմէ ստեղծուած աշխարհին նկատմամբ:

Ամերիկայի մէջ ուղղափառները ամէն տարի Սեպտեմբեր ամսուան մէջ յատուկ ժամերգութիւն կը կատարեն, որ նուիրուած կ'ըլլայ բնապահպանման:

Անոնք աշխատանք կը տանին աղտոտ գետերը մաքրելու, հանրային պարտէզներուն մէջ գետին թափուած աղբերը հաւաքելու եւ իրենց տան շրջափակը կարգի դնելու:

Աշակերտներուն հարցուցէք, թէ ինչպէ՞ս կրնան օգնել, որ մեր շրջապատը աւելի գրաւիչ դառնայ ու ա-

ւելի օգտակար ըլլայ Աստուծոյ բոլոր արարածներուն համար:

Պէտք է փառաւորենք զԱստուած եւ շնորհակալութիւն յայտնենք Անոր, իր հրաշալի նուերին համար, խնամենք ու հոգ տանինք այն աշխարհին՝ որուն մէջ կը բնակինք: Աշակերտները գոց թող սորվին զայն եւ անոնց հետ միասին կարդացէ՛ք երեկոյեան ժամերգութեան ընթացքին կարդացուող սաղմոսը:

### **Ընտանեկան միջավայրին մէջ**

Դասի վերջաւորութեան վերաբաղմը ըրէք ընդհանուր միւթին վրայ: Թելադրեցէ՛ք աշակերտներուն, որ իրենց ծնողներուն պատմեն ինչ որ

այսօր սորվեցան, Աստուծոյ կողմէ այս աշխարհի ստեղծման մասին, ինչպէս նաեւ անոնք ներկայացնեն այն աշխատանքները, որոնք կատարած են դասարանին մէջ: Իսկ եթէ կան բաժիններ, որոնք ժամանակի չգոյութեան պատճառով դասարանին մէջ չեն կրցած կարդալ, թելադրեցէ՛ք որ տան մէջ, իրենց ծնողներուն օգնութեամբ կարդան: Եթէ կարելի ըլլայ՝ անձամբ ծանօթացէ՛ք ծնողներուն: Առիթ ստեղծեցէ՛ք անոնց բացատրելու «Ընտանեկան միջավայրին մէջ» բաժնին կարելութիւնը եւ բացատրեցէ՛ք անոնց, թէ տան մէջ ինչպէ՞ս պէտք է օգտագործեն աշակերտական դասագիրքը:



**Դասի հիմնական միւթը՝ Աստուած մարդիկ կը ստեղծէ, որպէսզի անոնք ստեղծուած աշխարհին հոգ տանին:**

**Ս. Գիրք՝ Ծն. 1:26-2:24**

**Սաղմոսագիրք՝ Սղ 101:3-3**

**Կեանքը եկեղեցւոյ մէջ՝ Անուանակոչութիւն: Սուրբերուն անունները:**

**Եկեղեցական տօներ եւ սուրբերու յիշատակութեան օրեր՝ Տօն ծննդեան Ս. Աստուածածնին Աճնային:**

**Նախապատրաստութիւն դասի**

Եթէ նախորդ դասապահին աշակերտները լուսանկարած է՝ (տե՛ս Դաս 1-ի «Դասի սկզբնաւորութեան» բաժինը), զանոնք բոլորը միասին փակցուցէ ցուց ստախտակի մը վրայ, կամ ճիւղի մը վրայ ամրացուցէ: Դասին համար, հետեւեցէք աշակերտներու դասագիրքին: Որպէս ամբողջացում միւթի, կրնաք մեծ թուղթի մը վրայ պատրաստել «Ասիկա Աստուած ստեղծած է», «Ասիկա մարդիկ ըրած են» միւթերով նկարագարողումներ:

**Դասամիւթին տեսանելի ներկայացումը**

Դասարանին մէկ անկիւնը ձեր գետեղած սեղանին վրայ դրէք մարդոց եւ կենդանիներու նկարներ, կամ փոքրիկ արծանիկներ, լիսկ այն ճիւղը որուն վրայ դրած էի՝ աշակերտներուն նկարները, ծաւկամանին մէջ դրէք, ու ծաղկամանի սեղանին կեղորոնը գետեղեցէք: Սեղանին վրայ դրէք նաեւ սուրբերով շրջապատուած Աստուածամոր մանրանկարը: Աշակերտներուն թելադրեցէք թուել լուսանկարներուն եւ մանրանկարին մէջ տեսած իրենց անձերը:

**Դասի սկզբնաւորութեան**

Այսօրուան դասին միւթը՝ Աստուծոյ կողմէ մարդուն ստեղծումն է եւ այն մեծ սիրոյ մասին է, որով Աստուած սիրեց մեզ: Ինչպէս նկարներէն յայտնի է, մենք իրարու չենք նմանիր, հակառակ անոր որ բոլորս ալ ստեղծուած ենք մէկ նպատակի՝ զԱստուած սիրելու եւ զիրար սիրելու համար:

**Պատմութիւններ Սուրբ Գիրքէն**

Դասի մէջ տրուած Աստուածաշնչական պատմութիւնը պատմելով, անցէք «խօսինք այս պատմութիւններուն մասին» բաժնին: Աշակերտները երկու-երեք հոգինոց խումբերու բաժնելով, թելադրեցէք որ իրարու ծանօթանան: 10 վայրկեան տրամադրեցէք իրարու հարցումները ամբողջ դասարանին թող պատմեն, թէ ի՞նչ կրցան գիտնալ իրենց ընկերներուն մասին: Հարցուցէք թէ անոնք իրենց ընկերներուն մէջ ի՞նչ իւրայատկութիւններ նշմարած են եւ որո՞նց հետ ծանօթացած են: Ապա շարունակեցէք Աստուածաշնչական պատմութեան քննարկումը, օգտուելով դասագիրքի «խօսինք այս պատմութիւններուն մասին» (էջ 10) բաժնի հարցումներէն:

**Դասի հիմնական միւթին բացատրութիւն**

Աշակերտներուն առաջարկեցէք հետեւեալ խաղը խաղալ: Անոնցմէ իւրաքանչիւրը աշակերտի մը անունը թող տայ եւ թող ըսէ թէ ի՞նչ նոր բան գիտցած է անոր մասին (կրնայ այդ գիտցածը իւրայատկութիւն մը ըլլալ): Սակայն, կարելի չէ տալ այն աշակերտին անունը, որուն մասին խօսուած է արդէն: Հարցուցէք անոնց, անունները ինչո՞ւ համար կարելոր են մեզի եւ ինչո՞ւ ճիշդ այդ անունը տրուած է մեզի: Որո՞ւ անունը եղած է ատիկա: Ի՞նչ կը մտածես երբ մէկու մը, օրինակ՝ մօրդ, եղբօրդ, քրոջդ, ընկերոջդ կամ սուրբի մը անունը լսես: Մէկու մը անունը լսել, կը նշանակէ անոր մասին շատ կարեւոր բան մը իմանալ, այսինքն գիտնալ թէ ո՞վ է այդ անձը: Աստուած մեզ բոլորս մեր անուններով գիտէ: Ան բոլորս կը սիրէ եւ բոլորիս հոգ կը տանի: Աստուած Ադամին ըսաւ որ ստեղծուած բոլոր կենդանիներուն անուններ տայ: Ինչո՞ւ Աստուած ինք անուններ չտուաւ անոնց եւ Ադամին պարտականութիւն տուաւ: Չէ՞ որ Աստուած ինք ստեղծած էր զանոնք եւ ինք ալ կրնար անոնց անուններ տալ (այս մասին աշա-

կերտները թող իրենց կարծիքը տան եւ ենթադրութիւններ ընեն): Յաւանաբար Աստուած այդ պարտականութիւնը տուաւ Ադամին, որովհետեւ կ'ուզէր որ ան ճանչնայ կենդանիները եւ ի հարկին անոնց հոգ տանի:

Պատահա՞ծ է երբեք, որ դուք որեւէ ընտանի կենդանիի անուն տուած էք: Դուք ինչպէ՞ս այդ անունը ընտրած էք: Յանձնարարեցէ՞ք աշակերտներուն, իրենց դասագիրքի 11-րդ էջի պարտականութիւնը կատարել:

#### **Կեանքը եկեղեցոյ մէջ**

Աշակերտներուն հարցուցէք թէ գիտե՞ն արդեօք որ այս շաբաթ եկեղեցին որո՞ւ ծնունդը կը տօնէ (Ս. Աստուածածնի ծնունդը): Սուրբ

Կոյս Մարիամը Աստուծոյ համար ի՞նչ գործ կատարեց (ան Աստուծոյ կամքը կատարելով՝ ծնաւ Աստուծոյ Որդին):

Դասագիրքին մէջէն աշակերտներուն համար կարդացէք Աստուածածնի ծննդեան պատմութիւնը եւ անոնց ուշադրութիւնը հրաւիրեցէք 13-րդ էջի սրբապատկերին վրայ: Անոնք արդեօք կը յիշե՞ն Սուրբ Կոյս Մարիամի ծնողներուն անունները: Անոնց թելադրեցէ՞ք ուշի ուշով մտիկ ընել այն անունները, որոնք հոգեւորականը կը կարդայ ժամերգութեան վերջաւորութեան: Թուեցէ՞ք Աստուածամօր նուիրուած տօները եւ ամփոփ կերպով ներկայացուցէք այն դէպքերը, որոնց համար հաստատուած են այդ տօները: Աշակերտները դասարանին կամ տան մէջ թող կատարեն

դասագիրքի 14-րդ էջի պարտականութիւնը:

#### **Ընտանեկան միջավայրին մէջ**

Աշակերտներուն թելադրեցէ՞ք, լաւապէս ծանօթանալ իրենց հարազատներուն՝ մօր, հօր, մեծ հօր ու մեծ մօր, եղբայրներուն եւ քոյրերուն եւ այլ հարազատներու անուններուն: Անոնք թող ընտանեկան հին լուսանկարներու նային եւ իրենց ծնողներուն օգնութեամբ այդ անձերուն մասին նոր բաներ սորվին: Անոնց ուշադրութիւնը հրաւիրեցէ՞ք «Ընտանեկան միջավայրին մէջ» բաժնին վրայ: Աշակերտներուն թելադրեցէ՞ք իրենց ծնողներուն եւ այլ ազգականներու օգնութեամբ իրենց ընտանեկան տոհմաձառը պատրաստել:



**Պատի հիմնական նիւթը՝** Աստուած մեզի ազատութիւն տուաւ, որպէսզի կամ սիրենք զինք ու անբողոքութեամբ վստահինք Իրեն, եւ կամ՝ մեր կամքին համաձայն ապրինք:

**Ս. Գիրք՝ Ծն. 3.1-24:**

**Սաղմոսագիրք՝ Սղ. 1.1ա, 6**

**Կեանքը եկեղեցւոյ մէջ՝** Խաչին վրայ մեռնելով, մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, մեզի նոր կեանք պարգեւեց:

**Եկեղեցական տօներ եւ սուրբերու յիշատակութեան օրեր՝** Խաչվերաց:

### **Նախապատրաստութիւն դասի**

Փորձեցէք գտնել «Որ զօրէնս սըրբութեան» շարականին ծայնագրութիւնը: Պէտք է բաւարարուիլ երբ աշակերտները այդ շարականին առաջին տողը գոց սորվին: Եթէ կըրնաք այդ երգին ծայնագրութիւնը թուղթի վրայ գրեցէք (միայն առաջին տողին ծայնագրութիւնը):

### **Պատասխաններ տեսանելի ներկայացումը**

Սեղանին կեդրոնը գետեղեցէք միջակ մեծութեամբ խաչ մը եւ անոր շուրջը ծաղիկներ դրէք: Խաչը կարելի է նաեւ յատուկ տախտակի մը վրայ ամրացնել եւ ծաղիկներն ալ անոր շուրջը դասաւորել: Եթէ Խաչվերացի յատուկ մանրանկար կամ սրբապատկեր ունիք՝ այդ ալ դրէք սեղանին վրայ, խաչին կողքին: Սեղանին վրայ դրէք նաեւ Աստուածաշունչը՝ Սաղմոսի առաջին էջը բացած: Այս դասապահի ընթացքին աշակերտները իրենք պէտք է սեղանով հետաքրքրուած ըլլան եւ իրենք իրենց մօտենան անոր: Աշակերտներուն դասարան մուտքի պահուն պէտք է դնել «Այդ երանելի» շարականին ծայներիզը:

### **Պատի սկզբնաւորութեան**

Բացէք դասագիրքին այն էջը, ուր կը պատմուի առաջին մարդուն մեղանշումին մասին (էջ 16): Այդ նիւթը սկսելէ առաջ, աշակերտներուն հետ վերաբաղ մը ըրէք նախորդ դասին (մարդու ստեղծումին) նիւթը եւ ապա սկսեցէք նոր նիւթին դասաւանդումին:

### **Պատմութիւններ Սուրբ Գիրքէն**

Օգտուելով դասագիրքէն, աշակերտներուն պատմեցէք առաջին մարդուն մեղանշումին մասին: ապա թելադրեցէք աշակերտներուն որ բանան դասագիրքը եւ իրենք գտնեն առաջին Սաղմոսին առաջին տողը (էջ 18): Միասնաբար կարդացէք զայն: Ի՞նչ կապ գոյութիւն ունի առաջին մարդուն մեղանշումին եւ իրենց կարդացած այս տողին միջեւ: Աշակերտներուն բացատրեցէք անհասկնալի բառերուն իմաստը: Մատնանշեցէք «մեղաւորներու խորհուրդ»-ի եւ այն «խորհուրդ»-ին կապը, որուն ծանօթացան իրենք մեղանշումի պատմութեան ընթացքին: Ո՞վ տուաւ այդ խորհուրդը (սատանան, չար ոգին՝ օժի կերպարանքով): Աստուած ինչպիսի՞ նկարագիր կ'ուզէ

որ ունենանք (որպէսզի մեր կեանքի ընթացքին հաւատքով ապրինք եւ ոչ թէ մեղաւորներուն նման, այսինքն մեղանշական կեանքով): Աշակերտները թող պատմեն, թէ բնաւ իրենց կեանքի ընթացքին պարտաւոր զգացա՞ծ են լաւ ու վատ ճամբաներու (կամ արարքներու) միջեւ ընտրութիւն կատարելու: Արդեօք իրենց համար դժուար է ընտրութիւն կատարել բարիի եւ չարի միջեւ: Սեզմէ ի՞նչ կը պահանջուի, որպէսզի Աստուծոյ կամքը կատարենք: Աստուծոյ կամքը կատարելու համար ի՞նչ պէտք է ընելին Ադամն ու Եւան (օգտուելով «խօսինք կարդացուած պատմութիւններուն մասին» (էջ 16) բաժնի հարցումներէն, աշակերտներուն հետ վերաբաղ ըրէք Աստուածաշնչական պատմութեան հիմնական նիւթերը):

Սեզի համար ի՞նչ կը նախատեսէ Սաղմոսը, եթէ մեղանշողներուն ճամբան ընտրենք: Ասկէ յետոյ աշակերտները կրնան «խօսինք բարիք գործելու մասին» պարտակալութիւնը (էջ 17) կատարել, կամ ալ զայն կրնան տան մէջ՝ ծնողներուն հետ ընել: Եթէ բաւարար ժամանակ կայ տակաւին, կրնաք աշակերտներուն հետ թատերական ներկայա-

ցումներ կատարել, պարտականութեան մէջ նշուած վիճակները դերերու վերածելով:

### **Դասի հիմնական նիւթին բացատրութիւն**

Աշակերտներուն ըսէ՛ք որ բանան դասագիրքի այն էջը որուն վերագիրն է «Տէրը մեզի նոր կեանք կը պարգեւէ» (էջ 18): Եթէ աշակերտները ուշի ուշով կը հետեւին ձեզի, անոնց պատմեցէ՛ք մարդկութեան մեղքերը քաւող Աստուծոյ Որդիին մասին: Իսկ եթէ զգաք որ անոնք յոգնած են եւ անուշադիր են այլեւս, օգնեցէ՛ք անոնց որ քիչ մը ցրուին ու հանգստանան: Այդ ընելու համար, կրնաք անոնց սորվեցնել «Որ զօրէնս սրբութեան» շարականէն մի քանի տողեր: Ապա աշակերտ-

ներուն պատմեցէ՛ք այն գլխաւոր գաղափարներուն մասին, զորս անոնք պէտք է գիտնան Աստուծոյ Որդիին զալուստին ու խաչելութեան մասին:

### **Կեանքը եկեղեցոյ մէջ**

Հարցուցէ՛ք թէ աշակերտներէն որո՞նք Յիսուսի խաչելութեան պատկերը տեսած են եկեղեցոյ մէջ եւ կամ Անոր հրաշափառ խաչը: Անոնցմէ ո՞վ կը յիշէ այն շարականը, զոր հաւատացեալներ կ'երգեն եկեղեցոյ մէջ, երբ անոնք կը ծնրադրեն Քրիստոսի խաչին առջեւ: Ապա, աշակերտներուն հետ խաչով ու ծաղիկներով զարդարուած սեղանին մօտեցէ՛ք եւ երեք անգամ խոնարհութիւն ընելով «Խաչի քո Քրիստոս» շարականը երգեցէ՛ք:

Բացատրեցէ՛ք որ Խաչվերացի տունը ներկայացնող մանրանկարին մէջ ի՞նչ պատկերուած է: Այդ նպատակով կարելի է օգտագործել դասագիրքին մէջ ներկայացուած պատմութիւնը:

Աշակերտներուն պէտք է թելադրել որ այդ պատմութիւնը տան մէջ ալ կարդան՝ ծնողներուն հետ:

### **Ընտանեկան միջավայրին մէջ**

Դասապահի վերջաւորութեան աշակերտներուն հետ կրկնեցէ՛ք դասին բովանդակութիւնը արտայայտող առանցքային նիւթերը եւ տըրուած պարտականութիւնները: Յոյց տուէ՛ք նաեւ, թէ անոնք ի՞նչ պէտք է ընեն կամ կարդան տան մէջ:

